№ 71 ԵՐԵՔՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 2 — 1902 — ԵՐԵՔՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 2 № 71

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գործը չը պէտք է մեռնի.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կարա-Մուրզայի թաղումը. Սիրողների ներկայացումը. Նամակ Շամախուց. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Տնայնագործական-արդիւնաբերական ցուցահանդէս Պետերբուրգում.

ԳՈՐԾԸ ՉԸ ՊԷՏՔ Է ՄԵՌՆԻ

Այն գործը, որին նուիրել էր իրան հանգուցեալ Քրիստափոր Կարա-Մուրզան, կարևոր կուլտուրական և հասարակական մի գործ է, որի պահպանութեան և զարգացման մասին պէտք է առանձին հոգ տանէ մեր հասարակութիւնը:

Այն խմբերը, որոնք կազմվում էին Կարա-Մուրզայի ղեկավարութեամբ, կատարում էին մի քանի դեր միանգամից: Նրանք հանդէս էին բերում մեր ժողովրդական երգերը իրանց յատուկ ազգագրական բնորոշ առանձնայատկութիւններով: Նրանք տալիս էին այդ երգերը մշակված, կանոնաւոր երաժշտական օրէնքների ենթարկված և ձայների բաժանված խըմբական կամ խօրային երգեցողութիւն կազմելու համար: Նրանք տալիս էին մեր հասարակութեանը և այն թէև ոչ բուն ժողովրդական, բայց վերջին տասնեակ տարիների ընթացքում հնարված և ժողովրդականութիւն ստացած երգերը, նոյնպէս ենթարկված կանոնաւոր մշակութեան: Այդ խմբերը տալիս էին մեզ և բուն եւրոպական երաժշտութեան նմուշներ, ծանօթացնելով մեր ազգաբնակութիւնը քաղաքակիրթ երկիրների երաժշտութեան արգասիքների հետ մայրենի մատչելի բարբառով: Վերջապէս այդ խմբերը հանդէս էին բերում նոր հայկական երաժշտական երկեր, փորձ փորձելով սկիզբ դնել երաժշտական ստեղծագործութեանը մեզանում:

Մի կողմից ժողովրդական երգ, միւս կողմից եւրոպական երաժշտութիւն, այդ երկուսը միացած միայն կարող էին նոր կեանք ներշնչել երգի զարգացման գործին մեր երկրում: Դա այդ գործի զարգացման հիմնական և էական պայմաններից մէկն է: Միւս հիմնական և կարևոր պայմանն է՝ այդ մշակված երգը տարածել ընդարձակ կերպով, մոցնել նրան կրթութեան անհրաժեշտ տարրերի շարքի մէջ և դարձնել նրան ժողովրդի սեփականութիւն:

Մեր հասարակութիւնը պէտք է որոնէ միջոցներ սկված և աջող առաջ տարված գործը շարունակելու: Նա, օրինակ, կարող է մինչև այժմ նօտագրած և մշակված երգերը հրատարակել և դրանով գործի մի մասը թեթևացնել: Նորակազմ դրամատիական ընկերութիւնը կարող է երաժշտական գործողներին հրաւիրել խորհրդակցութեան և մի որոշ գումար յատկացնել խմբեր կազմելու և ղեկավարելու համար: Եկեղեցական ծխական համայնքները կարող էին աւելի առատ կերպով յատկացնել գումարներ խմբական երգեցողութեան համար, որի մի մասը կը կազմէր եկեղեցական երգեցողութիւնը: Վերջապէս կարող էին կազմակերպվել խմբերական ընկերութիւններ քաղաքներում և գիւղերում, ինչպէս այդ տեղի ունի արևմտեան Եւրոպայում և Ռուսաստանի մի քանի տեղերում: Մենք չենք խօսում այստեղ մասնաւոր ձեռնարկողների մասին, որոնց ամենափայլուն ներկայացուցիչը եղաւ հանգուցեալ Կարա-Մուրզան:

Մեր հասարակութեան վրա բարոյական պարտաւորութիւն կայ այդ կարևոր գործը պահպանելու և զարգացնելու:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՅԻ ԹԱՂՈՒՄԸ

Շաբաթ օր, մարտի 30-ին, տեղի ունեցաւ Խ. Կարա-Մուրզայի թաղումը: Ժամի 10-ից հանգուցեալի բնակարանի մօտ հաւաքվեց մեծ բազմութիւն. այդտեղ էին մամուլի ներկայացուցիչներ, գրականագէտներ, երգեցիկ խմբերի մէջ մասնակցած անձինք երկու սեռից, Թիֆլիսի առեւտրական դպրոցի աշակերտները ուսուցչական խմբի հետ, Կուզանովի մասնաւոր ուսումնարանի աշակերտները եւ բազմաթիւ յարգողներ:

Յուղարկաւորութիւնը սկսվեց դէպի Կուկիայի կաթոլիկաց Պօղոս-Պետրոս եկեղեցին: Դագաղը ամբողջ ժամանակ տանում էին ուսերի վրա: Դագաղի կափարիչը տանում էին Կարա-Մուրզայի աշակերտուհիները: Հանդէսին հետեւում էր դիակառքը, որի վրա կախված էին 23 պսակներ: Եկեղեցում, պատարագից յետոյ, ճառեր կարդացին. հայ-կաթոլիկների հովիւ Ն. Նահապետեան, ուսուցիչ Գէդէօն Միրաղեան, դերասան Արշակ Յարութիւնեան եւ հանգուցեալի աշակերտներից մէկը: Բոլոր ճառախօսները զգացված դրուատում էին հանգուցեալ երաժշտագէտի եռանդուն գործունէութիւնը, մատուցած ահագին ծառայութիւնները: Խոր տպաւորութիւն թողեց մանաւանդ պ. Յարութիւնեանի գեղեցիկ ճառը. շատերը արտասվեցին...

Եկեղեցուց յուղարկաւորութեան հանդէսը դիմեց դէպի Կուկիայի կաթոլիկաց գերեզմանատունը: Այդտեղ, գերեզմանի վրա ճառեր կարդացին Ա. Քալանթար՝ «Մշակի» խմբագրութեան կողմից, տ. Եւանգուլեան՝ երգեցիկ խմբի կողմից: Պ. Երիցեան կարդաց մի ոտանաւոր. ի վերջոյ աշուղ Հազիրին էլ մի ոտանաւոր կարդաց:

Դագաղի վրա դրված էին հետեւեալ պսակները. 1) «Մշակի» խմբագրութիւնից, 2) «Մուրճի» խմբագրութիւնից, 3) Թիֆլիսի առեւտրական դպրոցի ուսուցիչներից, 4) գիմնազիստներից, 5) Կուզանովի դպրոցից, 6) Առեւտրական դպրոցի առաջին դասարանի աշակերտներից, 7) նոյն դպրոցի երկրորդ դասարանի աշակերտներից, 8) հայ դերասաններից, 9) ընկերներից, 10) Այգեգործական դպրոցի հայ աշակերտներից, 11) Մի խումբ յարգող հայ օրիորդներից, 12) Քաղաքային վարչութեան ծառայողների մի խմբից, 13) Առեւտրական ուսումնարանի հայ երգեցիկ խմբից, 14) Ցխօմելիձէի ղեկավարութեամբ կազմված ռուսաց երգեցիկ խմբի յարգողներից, 15) Թիֆլիսի վարժուհիների եւ դաստիարակչուհիների դպրոցի երեխաներից, 16) Իշխանուհի Սօֆիա Արղութեանի դպրոցի կողմից, 17) Կարա-Մուրզայի խմբի կողմից:—Մնացած 6 պսակները հանգուցեալի ազգականներից եւ բարեկամներից:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ-ԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

(Նամակ Պետերբուրգից)

I

Մարտի 5-ին Տաւրիկեան պալատում բացվեց, Թագուհի-Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնայի հովանաւորութեան տակ, համառուսական I տնայնագործական-արդիւնաբերական ցուցահանդէսը, ուր ի ցոյց են դրված ոչ միայն բուն Ռուսաստանի, այլ եւ Լեհաստանի, Ֆինլանդիայի, Սիբիրի, Թուրքեստանի, Միջին Ասիայի, Կովկասի եւ Անդրկովկասի տնայնագործական արդիւնաբերութիւնները եւ ձեռագործները: Մի եւ նոյն ժամանակ այդ ցուցահանդէսի առիթով գումարվեց Պետերբուրգում «տնայնագործական արդիւնաբերութեան գործիչների առաջին համառուսական համաժողովը», որ սկսվեց մարտի 12-ին եւ իր պարապմունքները աւարտեց 21-ին: Ցուցահանդէսը բաց է լինելու մինչեւ մայիսի 1-ը:

Երկրագործութեան եւ պետական կալուածների մինիստրութիւնը, որի նախաձեռնութեան է պատկանում ցուցահանդէսի բացումը եւ կազմակերպութիւնը ու համաժողովի գումարումը, հրատարակել է մի շքեղ, պատկերազարդ, ընդարձակ երկասիրութիւն «Ռուսաստանի տնայնագործական արհեստների տեսութիւն» (Обзоръ кустарныхъ промысловъ Россіи) վերնագրով, ուր աշխատում է ապացուցանել թէ երկրագործութիւնից յետոյ տնայնագործական արդիւնաբերութիւնը եկամուտի ամենակարեւոր աղբիւրն է Ռուսաստանի ազգաբնակութեան համար, ուստի եւ ներկայ համառուսական տնայնագործական ցուցահանդէսի բացման դիւաւոր նպատակն է—ցոյց տալ, թէ ժողովրդական աշխատութեան այդ ճիւղը որպիսի կարեւոր տնտեսական նշանակութիւն ունի: Այդ նշանակութեան կարեւորութիւնը ինքն ըստ ինքեան աչքի է ընկնում, եթէ ի նկատի ունենանք, որ բովանդակ Ռուսաստանում տնայնագործական աշխատութեամբ ապրում են մօտ 15,000,000 բնակիչ: Միւս կողմից, երկրագործութեան եւ պետական կալուածների մինիստր Երմօլով, համագումար ժողովի բացման եւ փակման ժամանակ արտասանած իր երկու ճառի մէջ, շեշտեց թէ ցուցահանդէսի եւ թէ համաժողովի ընդհանուր պետական նշանակութիւնը: Եւ արդէն այն հանգամանքը, որ տնայնագործական համագումար ժողովը, որին մասնակցում էին ոչ միայն Ռուսաստանի, այլ եւ ծայրերից եկած զանազան ներկայացուցիչներ, զեմստվոյի գործիչներ, քաղաքների, գիւղերի, գիտութեան, գեղարուեստների, արհեստների ներկայացուցիչներ, իր քննութեան առարկայ դարձրեց ոչ լոկ մասնագիտական, տեխնիքական հարցեր, այլ եւ ընդհանուր-պետական եւ հասարակական նշանակութիւն ունեցող հարցեր—ինչպէս զեմստվոյի հաստատութիւններ բոլոր նահանգների մէջ մտցնելը, հասարակական ինքնագործունէութեանը աւելի լայն ծաւալ տալը, ընդհանուր սկզբնական ուսում տարածելը, ժարմնական պատիժներ վերացնելը, գիւղական ժողովրդի իրաւունքները հաւասարեցնելը միւս դասակարգերի իրաւունքների հետ—պարզ ցոյց է տալիս, որ թէ ներկայ տնայնագործական ցուցահանդէսը, թէ տնայնագործական գործիչների համագումար ժողովը խորին ուշադրութեան են արժանի:

Այդ պատճառով, նախ քան ցուցահանդէսի եւ համագումարի մասին խօսելը, մենք անհրաժեշտ ենք համարում համառօտ կերպով բացատրել տնայնագործական արդիւնաբերութեան էութիւնը եւ նշանակութիւնը, մանաւանդ որ ժողովրդական աշխատութեան այդ ճիւղը կազմում է եւ մեր երկրի, Կովկասի ազգաբնակութեան համար ապրուստի գլխաւոր աղբիւր:

Տնայնագործական արդիւնաբերութիւնը տընտեսական ահագին նշանակութիւն ունի, գրեթէ նոյնչափ կարեւոր, որքան երկրագործութիւնը, այն երկիրների համար, ուր գործարանային արդիւնաբերութիւնը թոյլ է զարգացած: Տնայնագործական արդիւնաբերութիւնը հիմնված է այնպիսի սկզբունքների վրա, որոնք արմատական կերպով հակասում են, այսպէս կոչված, կապիտալիստական էվոլիւցիայի ընաւորութեան, այսինքն, նա թշնամի է կապիտալիստական արդիւնաբերութեան ձեւին: Իր պարզ ձեւի մէջ տնայնագործական արդիւնաբերութիւնը ներկայացնում է ամենից առաջ երկրագործական զբաղմունքի միացումը որ եւ է մի արհեստի հետ: Տնայնագործ ասելով, մենք պէտք է հասկանանք մանր ձեռնարկութիւնների տէր անձանց, այսպիսի ձեռնարկութիւնների, որոնց հիմքը կազմում է սեփական ընտանիքի անդամների ձեռքի աշխատութիւնը. ուրեմն տնայնագործութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ձեռակերտ աշխատութիւն: Դրանից հետեւում է, որ երբ այդ ձեռակերտ աշխատութեան որ եւ է ճիւղը տեխնիկայի կատարելագործութեան բարձր աստիճանին հասնէ եւ արհեստաւորից աւելի մեծ պատրաստութիւն պահանջվի, տնայնագործը պէտք է իր տեղը զիջէ մասնագէտ արհեստաւորին կամ աւելի խոշոր ձեռնարկութեան: Այդ է պատճառը, որ շատերը այն կարծիքի են, թէ տնայնագործական արդիւնաբերութիւնը կարող է գոյութիւն ունենալ միայն նահապետական, նախնական տնտեսական կազմութեան ժամանակ: Տնայնագործութիւնը, ասում են նրանք, հին, նախակուլտուրական կենցաղի մնացորդն է. նա դատապարտված է անհետացման, ուստի բոլոր հոգսերը՝ զարգացնել եւ պահպանել տնայնագործական արհեստները՝ անտեղի են եւ անխելացի, իբրեւ պատմութեան ընթացքը յետ պահելու փորձեր. ֆաբրիկան, գործարանը անպատճառ կը կլանեն տնայնագործին եւ սա ամենեւին չէ կարող մրցել, կռուել նրանց հետ, որովհետեւ խոշոր գործարանային արտադրութեան արդիւնքները միշտ աւելի էժան են նստում, քան տնայնագործական արդիւնքները: Երկաթուղիների ցանցի ծաւալումը, տեխնիական առաջադիմութիւնը, տեխնիական կատարելագործութիւնները արտադրութեան բոլոր ճիւղերի մէջ առաջ կը բերեն միշտ աշխատութեան բաժանումն, մասնագիտացումը եւ խոշոր ձեռնարկութիւնները միշտ կը կլանեն մանրերին:

Հիմնվելով այդ տեսակէտի վրա, երկար ժամանակ Ռուսաստանում ուշադրութիւն չէին դարձնում տնայնագործական արդիւնաբերութեան վրա, համարելով այդ արդիւնաբերութիւնը՝ յատուկ միայն ոչ-քաղաքակրթական երկրներին, եւ ոչ մի էական միջոցներ ձեռք չէին առնվում տնայնագործութիւնը զարգացնելու եւ կատարելագործելու համար: Աւելի խոր ուսումնասիրութիւնը ցոյց տուեց նոյնպէս, որ նոյն իսկ արեւմտեան Եւրոպայում, ուր կապիտալիստական տնտեսութեան համար պայմանները աւելի նպաստաւոր են, քան Ռուսաստանում, տնայնագործական կամ մանր արդիւնաբերութիւնը լայն աջակցութիւն է գտնում կառավարութեան եւ հասարակութեան կողմից: Միւս կողմից պետական-հասարակական տեսակէտից տնայնագործական կամ մանր արդիւնաբերութիւնը տնտեսական ահագին նշանակութիւն ունի այն պատճառով, որ նա հնարաւորութիւն է տալիս պետութեանը ձեռնտու կերպով դասաւորել հարստութիւնները, փոխանակ կուտակելու սահմանափակ թւով անձանց ձեռքում: Եթէ արեւմտեան Եւրոպայում յաճախ կրկնվում են արդիւնաբերական ճգնաժամեր, դրանց պատճառը հարստութիւնների կենտրոնացումն է սահմանափակ թւով անձանց ձեռքում: Տնայնագործական կամ մանր արդիւնաբերութիւնը կարող է դարմանել կամ գոնէ ամոքել այդ աղէտները: Այդ է պատճառը, որ վերջին 15—20 տարվայ ընթացքում կառավարութիւնը եւ զեմստվոները լուրջ ուշադրութիւն դարձրին տնայնագործական արդիւնաբերութեան վրա եւ գործին լայն զարկ տրվեց մանաւանդ այն օրից, երբ վերակազմվեց 1894-ին երկրագործութեան եւ պետական կալուածների մինիստրութիւնը: Այդ մինիստրութեան մէջ կազմվեց կենտրոնական տնայնագործական կոմիտէտ, իսկ նահանգներում կազմվեցին նահանգական եւ գաւառական տնայնագործական կոմիտէներ: Այդպիսի մի կոմիտէտ եւս կազմվեց Թիֆլիսում 1899-ին Կովկասեան տնայնագործական կոմիտէտ անունով: Եւ ահա այդ կենտրոնական եւ գաւառական տնայնագործական կոմիտէների արդիւնքն եղաւ գործի այնպիսի մի լայն եւ լուրջ ուսումնասիրութիւն, որ հնարաւորութիւն տուեց մինիստրութեան բանալ համառուսական տնայնագործական ցուցահանդէս եւ համառուսական տնայնագործական I համագումար ժողով:

Հ. Առաքելեան

Թաղումը վերջացաւ ժամի 3-ին։

—

Կարա-Մուրզայի մահվան առիթով մենք ստացանք հետեւեալ նոր հեռագիրները.

Բագուից. Թոյլ տուէք «Մշակի» միջոցով յայտնել խորին վիշտ արուեստի անխոնջ եւ անձնուրաց ծառայող ու բեղմնաւոր հասարակական գործիչ Կարա-Մուրզայի վաղաժամ մահվան առիթով։ Զալեան։

Սեւ քաղաքից. Ողբում ենք հայկական երաժշտութեան կրած թանգագին կորուստը։ Սաթինիկ, Մարգար Արտեմեան, Աննա եւ Անուշաւան Քալանթար։

Բագուից. Խորապէս վշտացած եմ հայկական երգեցիկ խմբերի անխոնջ կազմակերպող Կարա-Մուրզայի անժամանակ մահվան պատճառով։ Աստուածատուր Գալստեան։

Բագուից. Ողբում ենք ժողովրդական երգերի ժողովրդականացնող եւ անխոնջ գործիչ Կարա-Մուրզայի մահը. նրա յիշատակը երկար թարմ կը մնայ հայկական երաժշտութեան պատմութեան մէջ. թող նա բարի օրինակ հանդիսանայ նորերի համար։ Հայ գիմնազիստներ։

Բաթումից. Հայկական երգեցիկ խմբերի անմոռանալի կազմակերպող եւ իր անխորտակելի եռանդով ոգեւորող անձնուլաց աշխատաւոր Կարա-Մուրզայի անժամանակ մահը դառնութեամբ ողբում է Բաթումի հայ երիտասարդութիւնը։

Շուշուց. Այսօր լրագիրները բերին մեզ տխրալի լուր՝ հայկական երգեցիկ խմբերի անխոնջ կազմակերպողի անժամանակ մահվան մասին, կազմակերպողի, որ իր հրաշալի կոմպոզիցիաների մէջ այնպէս ճշդութեամբ տալիս էր այն հրաշալի մոտիվները, որոնց ստեղծել է ժողովուրդը իր վշտի եւ ուրախութիւնների րոպէներում։ Մինչեւ հոգու խորքը ցնցված այս անփոխարինելի կորստից, պարզ գիտակցելով, որ յանձին «Շուշանի» անմոռանալի հեղինակի ամբողջ ազգը զրկվեց իր արժանաւոր որդիներից մէկից, մենք սրտանց միանում ենք որբացած ընտանիքի վշտին, բայց նրա յիշատակը կենդանի կը մնայ։—Բէալիստներ։

Նոր-Նախիջեւանից. Ողբում եմ անփոխարինելի Կարա-Մուրզային։ Աբէլեան։

Ալէքսանդրոպոլից. Ուսուցիչը տանջվեց եւ մահացաւ։ Աշակերտներ Ամատունի, Բարսամեան, Էյիլբաչեան, Իզմալեան։

Ալէքսանդրոպոլից։ Խորապէս վշտացած ենք եռանդոտ երաժշտագէտ Կարա-Մուրզայի մահով. թող նրա մահը չը փչրէ մեր մէջ եղբայրութեան կապերը եւ հաւատը դէպի ապագան։ Տիգրանեան, Նալբանդեան, Բրուտեան, Ստեփանեան, Բաղդասարեան, Ադամեան, Աբգարեան, Սարգսեան, Տէր-Առաքելեան։

Ախալցխայից։ Հայկական երգերի անփոխարինելի ժողովրդականացնող Քրիստափոր Կարա-Մուրզայի անակնկալ մահը խորապէս վշտացրեց մեզ։ Թող յաւիտեան ապրէ մեր մէջ նրա անխոնջ եռանդի ոգին։ Ցարդողներ։

Վլադիկավկազից։ Վլադիկավկազի հայոց եկեղեցական երգեցիկ խումբը եւ հայ հասարակութիւնը, հոգեհանգիստ կատարելով անմոռանալի Քրիստափոր Կարա-Մուրզայի համար, սրանով յայտնում է իր խորին վիշտը մեր տաղանդաւոր կոմպոզիտորի մահվան առիթով։ Խմբի եւ հասարակութեան կողմից՝ Մանուկեան։

—

«Մշակի» № 70-ի մէջ, Բագուից ստացած հեռագրի տակ, Կարա-Մուրզայի մահվան առիթով, սխալմամբ դրված է «Գէորգ քահանայ Գէորգեան». պէտք է լինի—«աւագ քահանայ Գրիգորեանց»։

ՍԻՐՈՂՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

—

Շաբաթ, մարտի 30-ին, Արտիստիական ընկերութեան թատրոնում, պ. Արաքսեանի ղեկավարութեամբ, տեղի ունեցաւ սիրողների ներկայացումը, որին լրված հետաքրքրութեամբ վազուց սպասում էր Թիֆլիսի հայ, գուցէ եւ օտարազգի հասարակութիւնը։ Խաղում էին Պալիերոնի «Տաղտկալի աշխարհը» (Le monde ou l'on s'ennuie»)։ Պիեսը, որ սալոնական բնաւորութիւն ունեցող մի կատակերգութիւն է եւ մի քանի տարի է արդէն լոյս է տեսել, ժամանակին ոչ միայն Ֆրանսիայում, այլ եւ եւրոպական ուրիշ երկիրներում, եթէ ոչ մշտապէս՝ գոնէ անցողակի կերպով, միանգամից գրաւեց թատերական էպէներտուարը։

Կոմսուհի դը Սերան Պարիզի beau monde-ի ներկայացուցիչներից մէկն է. բայց նա որոշ չափով տարբերվում է սովորական beau monde-ականներից, որոնք, ինչպէս յայտնի է, իրանց թէ մոլութիւնների եւ թէ հազուագիւտ բարեմասնութիւնների մէջ առհասարակ բազմակողմանի են լինում։ Սակայն կոմսուհին բացառապէս լուրջ աշխարհի ներկայացուցիչն է, «Նոր Բաբիլոնում» նա չէ թաթախված ապականութեան տիղմով. նա ազատ է զգացմունքի փոթորիկներից, մտաւոր բարձունքներում է միայն սաւառնում եւ սիրոյ փոխարէն աւելի «լուրջ երջանկութիւններ» է որոնում։ Այսպէս թէ այնպէս այս լրջութիւնը խոր չէ, մակերեւոյթական է։ Կոմսուհին այն կանացի տիպերից է, որոնք մօդային հակումներով տոգորված՝ անընդունակ են ըմբռնելու կեանքի խորիմաստ եւ բազմակողմանի նշանակութիւնը, որոնք մտաւորականութեան կեղեւը գրկած երեւակայում են, թէ նրա ծուծն են ճմլում, հետեւաբար «ոչ ձուկ են եւ ոչ միս», կորած են թէ կեանքի եւ թէ մտքի համար։

Բայց կոմսուհի դը Սերանի աշխարհը թէեւ «տաղտկալի է», այնուամենայնիւ՝ զօրեղ։ Դա այն աշխարհն է, որտեղ մտնողը «նախասենեակում իր փայտն է կուլ տալիս, իսկ դահլիճում՝ լեզուն», դա «մինիստրութիւնների դուռն է», «ակադեմիկոսների նախասենեակը», «կարիէրների գործարանը»։

Հասկանալի է թէ այս տեսակ միակողմանի բաւականութիւններով յափշտակվող մի կին ինչ ոգի պիտի ներշնչէր, ինչ դաստիարակութիւն պիտի տար իր որդի Բօժէին։ Վերջինս արդէն քսանութամեայ հասակում է, բայց «դեռ ոչ մի գործ չէ արել»։

Բոլորովին ուրիշ տիպ է ներկայացնում կոմսական մօրաքոյրը՝ դքսուհի դը Բէվէյլ։ Կեանքի հաճոյքների բաժակը դատարկած՝ նա այժմ արդէն տարիքաւոր կին է. բնաւորութեամբ կենսուրախ, բայց ոչ թեթեւսոլիկ։ Կեանքի դասերից, գուցէ եւ անձնական փորձառութիւններից, նա մի անխախտելի եզրակացութիւն է միայն հանել—աշխարհումս կանանց համար միայն մի բան կայ, որ ձանձրալի չէ՝ դա սիրեն է եւ սիրվելը։ Եւ մինչդեռ կոմսուհի դը Սերան կամենում է Բօժէին ամուսնացնել մի անգլուհու, Լիւիսի Ուատսօնի հետ, որ բնաւորութեամբ միանգամայն սառն է, անկենդան եւ դարձեալ մտաւորականութեան հովերով բռնված—դքսուհին ընդհակառակն՝ ցանկանում է նրան ամուսնացնել դը Սերանի հոգեւորդու, մատաղահաս Սիւզանի հետ։

Սիւզանը կոմէդիայի ամենահետաքրքիր դէմքերից մէկն է։ Նա մի ապօրինի զաւակ է՝ «կասկածելի ծագումով, երկիւղալի բնաւորութեամբ»։ Թէեւ նա էլ է գնում մօդային հոսանքով, այնուամենայնիւ փայլում է մի սիրուն առանձնայատկութեամբ—դա նրա երիտասարդական թարմութիւնն է, մանաւանդ անմեղ եւ սրտաբաց բնաւորութիւնը։ Սիւզանը արդէն 18 տարեկան է. նրա կեանքի «գարնան եղանակն է, երբ ծաղիկը բացվում է»։ Եւ չոր, սառնարիւն, կեանքի իսկական յափշտակութիւններին անանսօթ Բօժէն վերջը խոնարհվում է այս նորափթիթ «ծաղիկի» առաջ. նա պատռում է իր միակողմանիութեան պատեանը եւ Սիւզանի անձնաւորութեան մէջ տեսնում է իր կեանքի «միակ ժպիտը»։

Մի այսպիսի պիէս ներկայացնելը, պէտք է նկատել, բաւական բարդ ձեռնարկութիւն է, մանաւանդ որ առանց ընտիր ուժերի ամբողջական տպաւորութիւնը կարող է միանգամայն նսեմանալ։ Սիրողների խումբը հաղիւ թէ յաւակնութիւն ունենար իրան in corpore ընտիր համարել—այնուամենայնիւ գոհութեամբ պէտք է խոստովանել, որ նա ընդհանրապէս պատուաւոր կերպով տարաւ իր վրա ծանրացած բեռը։ Աջողութեան գլխաւոր բաժինը անշուշտ պատկանում է տիկին Սպէնդիարեանին։ Ցարդելի տիկինը այնքան բնական, այնքան վայելուչ կերպով ներկայացրեց չարաճճի, տաքարիւն, կօկէտ, բայց միամիտ Սիւզանի տիպը, որ նրա խաղը միանգամայն գրաւիչ էր եւ յափշտակող։ Տիկնոջ փայլուն առաւելութիւններից մէկն այն է, որ նա տիրապետում է զգացմունքով խաղալու արուեստին։ Զը նայելով Լեսսինգի խօսքին թէ «զգացմունքը դերասանի տաղանդի ամենավիճելի յատկանիշներից մէկն է», այնուամենայնիւ պէտք է նկատել, որ կան դէպքեր, երբ ներքին հուրն արդէն անխուսափելի կերպով բոցավառվում է ունկնդրի առաջ եւ զգացմունքի գոյութիւն չընդունելը այլ եւս անհնարին է դառնում։ Տիկնոջ խաղի մէջ այս տեսակ ուժեղ ակնթարթի մենք հանդիպեցինք մանաւանդ երկրորդ գործողութեան վերջում՝ երբ դքսուհու առաջ Սիւզանը՝ իր մութ անցեալի չղարշն էր թօթափում։ Տիկնոջ աչքի ընկնող պակասութիւնը հայկական ոգուն խորթ արտասանութիւնն է եւ երբեմն արագ խօսելը, որոնք ըստ երեւոյթին, անցողական են։ Տիկին Սպենդիարեանը եթէ նուիրվէ դերասանական արուեստին՝ ժամանակի ընթացքում անշուշտ մեր բեմի ընտիր զարդերից մէկը կը դառնայ։ Սա կրկնալի ցանկալի է, մանաւանդ որ ingenue dramatique-ի եւ grande coquette-ի մեծ պակասութիւն է զգացվում մեր ներկայ խմբում։

Պ. Ա. Մինասեանը, որ ներկայացումից երեք օր առաջ փոխարինել էր պ. Պ. Կարա-Մուրզային, գոհացուցիչ կերպով կատարեց Բօժէ դը Սերանի դերը։ Պարոնը առանց սայթաքելու խաղաց վերջին գործողութեան մէջ rendez-vous-ի բարդ տեսարանը, երբ նա վերջապէս Սիւզանի սիրով յափշտակված՝ հոգեպէս միանգամայն կերպարանափոխվում է։

Տիկին Լալայեանը կոմսուհի դը Սէրանի դերը բաւարար աջողութեամբ կատարեց։ Բաւական նուրբ էր եւ մտածված։ Իշխ. Արղուբեանի դքսուհի դը Բեվէյլ, ինչպէս եւ իշխ. Թումանեանի Լիւսի Ուատսօն. յարգելի տիկինը սառն անգլուհու ընդհանուր պատկերը եւ առհասարակ արտաքին ձեւերը սկզբից մինչեւ վերջ պատշաճաւոր հետեւողութեամբ պահպանեց։ Տիկին Աթաբէգեանը շատ կենդանի եւ աշխոյժ կերպով խաղաց Ժաննա Բէմօնի դերը։ Պ. Աթաբէգեանի Պոլ Բէմօնը նոյնպէս լաւ էր։ Պ. Զարգարեանի Բէլլակը գուցէ մի քիչ միօրինակ, բայց ընդհանրապէս գովելի էր։ Միւս դերակատարներից տիկին Դօլուխանեան, օր. Մէլիք-Հայկազեան, պ. պ. Խատիսեան, Դօլուխանեան եւ Ա. Մ. Աթաբէգեան իրանց փոքրիկ դերերով վայելուչ կերպով պահպանեցին ամբողջութիւնը։

Բէժիսէօր պ. Արաքսեանը, ինչպէս երեւում է, մեծ խնամք էր ցոյց տուել ներկայացման աջողութեան համար. դէկօրացիան շատ գեղեցիկ էր, մանաւանդ վերջին գործողութեան մէջ։ Միայն պէտք է նկատել, որ պարոնը մի քիչ անպատակայարմար կերպով էր կրճատել պիէսան։ Այսպէս՝ առաջին գործողութիւնից ջնջված էին մի քանի կարեւոր հատուածներ, առանց որոնց ունկնդիրը շատ աղօտ կերպով միայն կարող էր հասկանալ թէ ինչու պիէսը կոչվում է «Տաղտկալի աշխարհ»։

Թատրօնը համարեա բոլորովին լիքն էր։ Հասարակութիւնը հեռացաւ գոհ սրտով եւ յարգելի դերակատարներին վարձատրեց ջերմ ծափահարութեամբ։

Վ. Նալբանդեան

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

—

Մարտի 25-ին

Մարտի 19-ին, երեկոյեան, օգնութեան կոմիտէի թուրք անդամներ Վէքիլովի եւ Ակիեվի հետ պ. Ս. Եգանեան մեզ էր գալիս հայոց թաղը, տախտակի բաժանման կարիք ունեցողներին ցուցակագրելու համար։ Պ. Եգանեան մի քանի անգամ նկատողութիւններ է անում թուրք անդամների անարդար վարմունքի մասին. Վէքիլով եւ Ակիեվ հրամայում են իրանց շրջապատող թուրք փողոցային թափառաշրջիկներին խփել Եգանեանին. նրանք անմիջապէս կատարում են հրամանը։ Ցաւալի դէպքը քիչ էր մնում մեծ ընդհարման պատճառ դառնար։ Հայերը վրա հասնելիս արդէն պոլիցիան գործի միջամտած էր։ Խմբերը այս եւ այն կողմերում յարձակման էին պատրաստվում, բայց շրջող պոլիցիան եւ կազակները արգելք էին լինում։

Վրդովված՝ թուրք անդամների այսպիսի անարգ եւ անպատիւ վարմունքից, ժողովուրդը մի հեռագրով դիմեց պ. նահանգապետին՝ յայտնելով գործի եղելութիւնը, թուրքերի սպառնալիքը եւ խնդրեց նրա արդար կարգադրութիւնը։ Դէպքը շատ թուրքերի էլ զայրացրել էր։ Նրանք խումբ խումբ գալիս եւ խնդրում էին, որ իրանց եւս միացնեն գանգատի մէջ, որպէս անարդարութեան դէմ բողոքողներին։

Երէկ, մարտի 24-ին, լուծվեց տեղային կոմիտէի նախկին կազմը։ Բագուից եկած թուրք անդամներին պոլիցիան առաջարկեց անմիջապէս հեռանալ, հաւանականօրէն նահանգական կոմիտէի պահանջմամբ։ Նրանք պոլիցիայի որոշած ժամանակից մէկ օր յետոյ ճանապարհվեցին։ Զը սպասված անակնկալ առաջարկութիւնը ստիպում էր նրանց մի քանի բաներ կարգի դնել, թէեւ չաջողվեց։ Խորհրդարանը կնքված է։ Կազմվեց անդամների նոր ցուցակ։ Այսօր, մարտի 25-ին, ճանապարհվեցին յիշեալ եկեղեցիները դժգոհ սրտով։ Բայց դժգոհ են նրանցից եւ մեր քաղաքացիները։ Տախտակների բաժանումը դադարեցրած է, թէեւ շատ թուրքեր արդէն ստացել էին իրանց բաժինը։ Բագուից տախտակներ այլ եւս չեն ուղարկվում։ Այստեղ եղածների մնացորդով քաղաքի շուրջը, վեց կէտերի վրա, չինվում են բնակարաններ։ Բայց իր տան բազմատեսակ պարագաները քաղաքի ներսում ով պիտի թողնէ սաստիկ տարածված թալանողներին ու ինքը գայ դաշտում ապրէ. հաւանական է՝ այնպիսիները, որոնք այդ կողմից միաւորացած են, կամ որոնք երկու փալաս եւ մի ձեռք անկողնուց աւելի ոչինչ չունեն։ Հակառակ դէպքում նրանք հարիւրներ պիտի կորցնեն 20 տախտակից չինվող մի ժամանակաւոր բնակարանի փոխարէն։ Քրիստոնեաներից ոչ ոք մինչեւ օրս չը համաձայնվեց թողնել իր տունը ու տեղը, իր փայտակները եւ հեռանալ քաղաքից դուրս։

Ապրիլի 7-ին այստեղ սպասում են իշխան կառավարչապետին. այժմ նրա կողմից ուղարկված է այստեղ նորին պայծառափայլութեան դիւանատան առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ պ. Լօպուխին։

Մարտի 24-ին, գիշերը 11 ժամը լրացած եւ 28-ին, գիշերվայ 1 ժամ 10 րոպէին, դարձեալ զգացվեցին միջակ եւ թեթեւ ցնցումներ։

Ս. Սարգիսբէկեան

ՆԵՐՔԻՆ ՀՈՒՐՀԻ

—

Թիֆլիսում տեղեկութիւն է ստացված, որ նորին մեծութիւն Մուզաֆֆէր-Էդդին Շահ մարտի 25-ին իր չքախմբի հետ միասին դուրս եկաւ Թէհրանից՝ երկրորդ ճանապարհորդութիւնը կատարելու Եւրոպայում։

—

Մեզ հաղորդում են հետեւեալը։ Վեհափառ Կաթողիկոսը միայն «Մշակից» է իմացել Յովսէփ Ճանիկեանի մահը. Էջմիածնի միաբանութիւնը, լաւ իմանալով որ Ճանիկեանը Վեհափառի խնամքով է ապրում Էջմիածնում, այնուամենայնիւ աւելորդ է համարել յայտնել նրան խեղճ պանդուխտի մահը։ Տեղեկանալով «Մշակից» թէ որքան անշուք, նոյն իսկ անպատիւ կերպով է թաղվել Ճանիկեանը, Վեհափառը մարտի 24-ին, կիրակի օր, Հռիփսիմէի վանքում պատարագ կատարել է տալիս Ճանիկեանի համար։ Պատարագին ներկայ էին ինքն Վեհափառը, Էջմիածնի ամբողջ միաբանութիւնը, ճեմարանի ուսուցչական խումբն ու աշակերտները։ Ապա հոգեհանգիստ կատարվեց Ճանիկեանի գերեզմանի վրա եւ Վեհափառը անձամբ օրհնեց գերեզմանը։

—

Կիրակի, մարտի 31-ին, ցերեկվայ ժամը 1-ին Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական ընկերութեան արհեստանոցի դահլիճում, իշխանուհի Թումանեանի նախագահութեամբ, տեղի ունեցաւ նոյն ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը, որի զբաղմունքի առարկաները հետեւեալներն էին—1901 թ. ընդհանուր ժողովի արձանագրութեան ընթերցումը, վարչութեան գործունէութեան հաշիւը 1901 թ., ընկերութեան դրամագլխի տարեկան հաշիւը, 1902 թի նախահաշուի վաւերացումը, վարչութեան 3 անդամների եւ փոխանդամների ընտրութիւնը, վերաստուգող յանձնաժողովի անդամների եւ փոխանդամների ընտրութիւնը։ Ընկերութիւնը իր գործունէութեան գլխաւոր եռանդը կենտրօնացրել է կարուձեւի արհեստանոցի շուրջը, որ անցեալ տարվայ ընթացքում ունեցել է 100 աշակերտուհիներ։ Ընկերութեան լուսացարանը բաւարար եկամուտ չը տալու պատճառով, առ ժամանակ փակված է։ Ընկերութեան գանձարանի մուտքն է 1901-ի յունվարից մինչեւ 1902-ի յունվարը 8365 ր. 69 կ., իսկ ծախսը՝ 6956 ր. 1 կոպէկ։ Վարչութեան անդամներ ընտրվեցին տ. տ. Բօտինեան եւ Մարտիրոսեան եւ օր. Թ. Միրիմանեան, փոխանդամներ՝ օր. Մէլիք-Հայկազեան եւ տիկին Լալայեան։ Վերաստուգող յանձնաժողովի անդամներ՝ տ. տ. Աւթանդիլեան, Թամամշեան եւ Բարխուդարեան, փոխանդամներ՝ տ. տ. Միրիմանեան եւ Մ. Բ. Դօլուխանեան։ Զը նայելով, որ ժողովը երկրորդ անդամն էր նշանակված՝ ներկայ եղող անդամների թիւը 30-ից չէր անցնում։ Ժողովը վերջացաւ ժամը 3¼-ին։

—

Ամերիկայի տուրիստները, որոնք եկել են Թիֆլիս Կովկասի գիւղատնտեսական արդիւնաբերութեան հետ ծանօթանալու համար, անցեալ շաբաթ եւ կիրակի օրերը չրջեցին նաեւ Թիֆլիսի շերամապահական կայարանը։ Տուրիստների թւում գտնվում է նաեւ յայտնի պրոֆէսսօր Բէրինգ, որ Բուի հետ միասին գտել է հակադիֆտերիտային շիճուկը։

—

Պետերբուրգի տնայնագործական արդիւնաբերութեան ցուցահանդէսը, ըստ երեւոյթին, հե-

...գրութիւն է զարթեցրել, ի միջի այլոց, ...ի կովկասեան տնայնագործութեան արտադրանքները։ Համբուրգի Գօտինգ եւ ընկ. յայտնի ֆիրմայի ներկայացուցիչներից երկու հոգի Պետերբուրգից եկել են Թիֆլիս եւ կամենում են Ախալցխայի արծաթեայ իրեղէնների եւ Դաղստանի տնայնագործական արդիւնքների գնումներ տալ մեծ քանակութեամբ։

—

Թիֆլիսի արքունական թատրոնի ներկայացումները, երգիչ Ֆիգների մասնակցութեամբ, վերջին օրերը գրաւում էին մեծ բազմութիւն։ Ուրբաթ երեկոյ ներկայացվեց «Հուգենոթներ» օպերան, իսկ կիրակի երեկոյեան «Ֆրադիաւոլո» լաւ կազմված անսամբլներով։ «Հուգենոթների» մէջ մասնակցում էին, բացի Ֆիգներից, երգչուհիներ Տետրացինի եւ Պաօլի եւ երգիչ Սիբիրեակով. երկրորդի մէջ երգչուհի Գուլինա, երգիչներ Զեզարի կոմիկական մեծ ընդունակութեամբ եւ Բրօջի։ Թիֆլիսի արտիստական թատրոնում ցիգանական երգչուհի Վեյցելա դարձեալ տուեց երկու կոնցերտ, որոնք գրաւեցին մեծ բազմութիւն։ Նրա երգը, իբրեւ գեղարուեստական մի գործ, բարձր չէ, բայց չոյում է կրքեր եւ կրում է սիրային ինքնութիւն, որով հաճելի է դառնում որոշ տեսակի պահանջ ունեցող հանդիսականների համար։

—

«Рус. Вѣд.» լրագիրը հետեւեալ մանրամասնութիւններն է հաղորդում Գլէբ Ուսպէնսկու թաղման մասին։ «Գ. Ի. Ուսպէնսկու թաղումը կատարվեց մեծ հանդէսով։ Զը նայելով անտանելի եղանակին,—առաւօտվանից ձիւնախառն անձրեւ էր գալիս,—Բալտեան երկաթուղու կայարանում առաւօտեան ժամի 11-ին հաւաքվել էր հանդուցեալ գրականագէտի յարգողներից ստուար բազմութիւն։ Այնտեղ կային ներկայացուցիչներ զանազան հասարակական դասակարգերից, սկսած բարձրաստիճան անձերից մինչեւ հասարակ բանուորները։ Երկաթուղու փացքին հանդիպելու համար, որով բերվում էր հանգուցեալ Ուսպէնսկու մարմինը, հաւաքվեցին բոլոր բարձրագոյն դպրոցների ուսանողները եւ ուսանողուհիները։ Դագաղի վրա դրվեցին բազմաթիւ պսակներ Պետերբուրգի մամուլի օրգանների, զանազան հիմնարկութիւնների եւ անձերի կողմից, որոնց մէջ աչքի էր ընկնում «Рус. Богатство» ամսագրի չքեղ արծաթեայ պսակը։ Բալտեան երկաթուղու կայարանից ժամի 12-ին սկսվելով՝ յուղարկաւորութիւնը հասաւ Վոլկովո գերեզմանատունը ժամի 4-ին։ Ամբողջ ճանապարհին երգում էր ուսանողներից եւ ուսանողուհիներից կազմված խումբը։ Գերեզմանատան եկեղեցում կատարված ժամերգութիւնից յետոյ՝ յուղարկաւորները ուղեւորվեցին դէպի գերեզմանը, որ պատրաստված էր Պավլէնկովի եւ Շելգունովի գերեզմանների մօտ։ Ի. Սիլչեվսկի մի զգածված ճառ խօսեց գերեզմանի մօտ, որի մէջ բնորոշեց հանգուցեալ գրականագէտին, որպէս «սրտի արիւնով» եւ «նեարդերի հիւթով» գրողի։ Ճառեր խօսեցին ապա Ն. Լեվիտսկի, Տ. Սոկոլովա եւ ուրիշները»։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ մեզ գրում են. «Մարտի 25-ին «Благородное собраніе» դահլիճում հայոց ներկայացում կայացաւ։ Խաղացին Պարոնեանի «Բաղդասար Աղբար» կոմեդիան։ Բոլոր մասնակցողները սիրողներ էին, բացի օրիորդ Ադամեանից, որ երկու տարի առաջ հայոց բեմի վրա Կովկասում մի քանի ներկայացումներին մասնակցել է եւ իր շնորհալի խաղով հայոց մամուլի ուշադրութեան է արժանացել։ Այժմ օրիորդն այստեղ է գտնվում. նա լուրջ կերպով անցնում է թատրոնական դասընթացքը եւ պատրաստվում է՝ յատկապէս հայոց բեմին ծառայելու։ Օրիորդ Ադամեանի խաղի մէջ նշմարվում է նրբութիւն եւ ճաշակ. օրիորդին աջողվում է մարդու ներքին աշխարհի վրդովմունքը եւ խնդութիւնը, ուրախութիւնն ու կրքկիծը, խորամանկութիւնն ու միամտութիւնը իր դիմադծերում արտափայլել եւ իր խաղով մեծ տպաւորութիւն է գործում հանդիսականների վրա։ Խաղն ընդհանրապէս լաւ անցաւ. իբրեւ սիրողների ներկայացում, դրանից աւելի պահանջել մեր կողմից անիրաւութիւն կը լինէր. ամեն մէկը իր դերումն էր եւ որ գլխաւորն է, իրանց դերերը լաւ գիտէին։ Բացի օրիորդ Ադամեանից ուշադրութեան արժանացաւ եւ օր. Աբրամեանը, որ շատ գեղեցիկ անցկացրեց իր դերի մի մասը։ Ներկայացումից յետոյ պ. Գ. Միրզոյեանի ասիական օրկեստրը նուագեց մի քանի ասիական եղանակներ, որ բաւականին աջողութիւն ունեցան։ Պ. Շահլամեան երգեց մի քանի կտորներ։ Երիտասարդ երգիչ պ. Տիգրան Նալբանդեան իր գեղեցիկ երգով շատ լաւ տպաւորութիւն գործեց հանդիսականների վրա։ Ինչ վերաբերում է նրա երգած «Կռունկին», այնքան ազդեց հասարակութեան վրա, որ ծափահարութեան վերջ չը կար։ Դահլիճը լի էր հանդիսականներով։ Ներկայացումից յետոյ սկսվեցին եւրոպական պարեր, որոնք տեւեցին մինչեւ ժամի 4-ը։ Ցաւում է չնորհակալութեան արժանի են կազմակերպող օրիորդները եւ երիտասարդները։ Ներանք անուշադիր չը թողեցին «Մշակի» ձայնը եւ գնները նշանակեցին շատ մատչելի։ Օրիորդ Ադամեանը թանգագին մի ընծայ ստացաւ, եւ մի զամբիւղ կենդանի ծաղիկներից հիւսված»։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են. «Երկու տարի առաջ, այստեղի երկրաշարժից վնասված գիւղացիներին օգնութիւն հասցնելու նպատակով, ուրիշ կամաւորների թւում, Թիֆլիսից մեր գաւառն էր եկել նաեւ գիւղատնտես պ. Ց. Ալիբէկեան, որը մի ինչ որ դէպքի ժամանակ միջամտելով՝ պաշտպանել էր գիւղացիներին ստրաժնիկների դէմ եւ այդ պատճառով պատասխանատուութեան էր ենթարկվել։ Թիֆլիսի նահանգական դատարանի քրէական բաժինը երէկ, մարտի 27-ին, քննելով պ. Ալիբէկեանի գործը, որով նա մեղադրվում էր իշխանութիւնը վիրաւորելու եւ նրա կարգադրութիւնների մէջ խառնվելու յանցանքներում, արդարացրեց նրան»։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Մարտի 26-ին, պ. Ն. Խանդամիրեանի թատրոնում, տեղական սիրողները, յօգուտ Վերին թաղի եկեղեցու ծխական դպրոցի խաղացին «Արշակ Բ.» պատմական պիեսը եւ «Բանաստեղծ» վոդեվիլը Փառնակէսի։ Դահլիճը կիսով չափ լիքն էր երկու սեռի հասարակութեամբ։ Ներկայացումը շատ աջող անցաւ, որովհետեւ սիրողները բարեխղճութեամբ էին վերաբերվել դէպի իրանց պարտականութիւնները։ Մուտքի կողմից բաւարար էր. ներկայացման վերջը նշանակված էին պարեր»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Անգլիական լրագիրները առաջնորդող յօդուածներ են նուիրում Սէսիլ Բօդսի կտակին։ Բոլորը միաբերան գովաբանում են հանգուցեալին նրա համար, որ նա կտակել է իր բոլոր ունեցածը հանրօգուտ նպատակների։ Մինչեւ անգամ «Daily News» լրագիրը, որ ընդհանրապէս չէր համակրում Բօդսին, ասում է. «Բօդսի կտակը ամենանշանաւոր կտակներից մէկն է, որոնք երբ եւ իցէ գրվել են։ Եթէ հանգուցեալի կամքի իրագործումը չը հանդիպի որ եւ է անսպասելի արգելքի, այդ դէպքում Բօդսի կտակը ամենանշանաւոր ազդեցութիւն կունենայ ապագայի վրա ոչ միայն Հարաւային Աֆրիկայում, այլ եւ ամբողջ պետութեան մէջ։ Նրա մէջ չը կայ ոչ մի այնպիսի բան, որին հաւանութիւն չը տար ամեն մի անգլիացի, որ սիրում է իր երկիրը»։ Ունիոնիստական մամուլը, ի հարկէ, աւելի եւս գովաբանում է Բօդսին եւ նոյն իսկ ընկնում է չափազանցութիւնների մէջ։ Մի քանի լրագիրներ հաւատացնում են, թէ Բօդսի առատաձեռնութիւնը գերազանցում է այն ամենից, որ աշխարհը տեսել է Ցուլիոս Կեսարից յետոյ։ «Նա տուել է ամենինչ, մինչեւ անգամ իր տունը»,—ասում է մի լրագիր։

—Ամստերդամից հեռագրում են «Neue Freie Presse» լրագրին, որ նախագահ Կրիւգէր նը-պաստաւոր տեղեկութիւններ է ստացել հարաւ-աֆրիկական պատերազմական բեմից եւ հաւաստիացումն բօէրական զօրավարներից, որ առանց նրա գիտութեան եւ համաձայնութեան իրանք լորդ Ռոբերտի հետ ոչ մի բանակցութիւն չեն սկսի։ Նոյն լրագրին հեռագրում են, որ մի բարեկամ պետութիւն մեծ ջանքեր է գործ դնում համոզելու Էդուարդ թագաւորին, որ նրա կառավարութիւնը աւելի զիջող դիրք բռնէ բօէրական անկախութեան հարցում։

—«Messager d'Athenes» համարում է բոլգարական կառավարութիւնը եւ բոլգարական ժողովուրդը այն աստիճան չահագրգռված մակեդոնական յեղափոխականների գործունէութեան մէջ, որ Ռուսաստանի եւ Աւստրօ-Ունգարիայի դիմումները չեն կարող ցանկալի ազդեցութիւն գործել նրանց վրա։ Այդ բանին ապացոյց է այն բուռն ուրախութիւնը, որ ցոյց տուեց բոլգարական ինտելիգենցիան, երբ դատարանը արդարացրեց Սարաֆօրովին եւ նրա ընկեր յեղափոխականներին։ Պէտք է չը մոռանալ եւ այն, որ մակեդոնական կենտրոնական կոմիտէտը գտնվում է Սոֆիայում եւ ամեն կերպ աջակցութիւն է գտնում բոլգարական ժողովրդի կողմից։

«ՄՇԱԿԻ» ԼՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

29 մարտի

ԽԱՐԿՕՎ։ Խարկով քաղաքի առեւտրականների տարեկան ժողովում վճռված է միջնորդել, որպէս զի թոյլ տրվի առեւտրական դրպրոցը մտնել այն հրէաների զաւակներին, որոնք Խարկովի մշտական առեւտրականներ են, սահմանափակելով նրանց թիւը աշակերտների ընդհանուր թւի տասը տոկոսով։

ՎԻԵՆՆԱ։ Մեծ Իշխան Սէրգէյ Միխայլովիչ ժամանեց այստեղ Կաննից։—Բիւլօվ ճանապարհ ընկաւ Բերլին. «Neue Freie Presse» լրագրի խօսքով, կայսրը շատ սիրալիր կերպով ընդունեց նրան։ Բիւլօվ, նոյնպէս եւ այն պետական մարդիկ, որոնց հետ նա խօսակցեց, այն համոզմունքի եկան, որ երեքպետեան դաշնակցութիւնը կը վերակվի։

ԼՕՆԴՕՆ։ Այստեղից ճանապարհ ընկան մի քանի հարիւր առեւտրական գործակալներ դէպի Հեռու Արեւելք, Ասիական Ռուսաստան եւ Կայսրութեան ներքին քաղաքները ձմեռնային ապրանքներ ծախելու համար։

ԲՐԻՍԷԼ։ Այստեղ եւ ուրիշ տեղերում զինուորական ընդարձակ միջոցներ են ձեռք առնված կարգը պահպանելու համար։

ԿԼԷՐԿՍԴՕՐՊ։ Այստեղ հասան Շտէյն, Նոյնպէս եւ Դէվէտ ու Դելարէյ իրանց շտաբներով։ Պատշաճաւոր միջոցներ են ձեռք առնված բօէրական կառավարութիւնների ներկայացուցիչներին պաշտպանելու համար. նրանց թոյլ է տրված յարաբերութիւններ հաստատել իրար մէջ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Կիեւի ուսումնարանական շրջանի հոգաբարձու գաղտնի խորհրդական Վելեամինով-Զէրնովին շնորհված է իսկական գաղտնի խորհրդականի աստիճան, արձակելով նրան ծառայութիւնից, իր խնդիրքի համաձայն։—Թագուհի Ալէքսանդրա Ֆէոդորովնա մարտի 29-ին այցելեց Կայսր Ալէքսանդր II-ի արհեստագիտական դպրոցը։

30 մարտի

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողովի բիւրեղեակ ասում է, որ կառավարութիւնը դեռ եւս տեղեկութիւններ չէ ստացել բօէրների առաջարկած խաղաղութեան պայմանների մասին։ Օկէլի հարցնում է, թէ արդեօք Կիտչենէր լիազորութիւն ունի՞ առաջարկել ուրիշ պայմաններ, բացի անպայման անձնատուր լինելուց։ Բրոդրիկ պատասխանում է, որ ինքն ոչինչ չէ կարող հաղորդել այդ բանի առիթով։ Բէկ հարցնում է, թէ արդեօք զինադադար գոյութիւն կունենայ այն ժամանակամիջոցում, երբ բօէրական հրամանատարները գտնվելիս կը լինեն իրանց զօրքերից հեռու։ Բրոդրիկ պատասխանում է, որ ոչ մի զինադադար չէ լինելու։

ՎԱՐՇԱՎԱ։ Երէկ Վարշավայի վրայով անցաւ դէպի արտասահման արդարադատութեան մինիստր Մուրավիեվ։

ԼՕՆԴՕՆ։ Զինուորական մինիստրութիւնը յայտարարում է, որ 1000 մարդիկ գվարդիական մասերից կազմում են այն զօրքերի առաջին էշելօնը, որոնք գնում են Հարաւային Աֆրիկա, ի նկատի առնելով ձմեռնային պատերազմը։ Հետեւեալները կազմված կը լինեն 7000 հոգի հետեւակներից, 1000 հոգի թնդանօթաձիգներից, 7000—եօմանրիներից եւ 5000 հոգի գաղթականական կօնտինգէնտներից։

ՇԱՆԳՀԱՅ։ Գերմանական «Գէյէր» եւ «Վիւկա» պատերազմական նաւերը ճանապարհ ընկան Նինպօ, որովհետեւ երկիւղ կայ, որ օտարահպատակների դէմ թշնամական շարժում կը սկսվի։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողովի նիստի վերջում Բալֆուր յայտնեց, որ խաղաղութեան բանակցութիւնների վերաբերմամբ պատող լուրերը անհիմն են։ Աֆրիկայից զեկուցումն չէ ստացված բանակցութիւնների մասին. իսկապէս այդպիսի տեղեկութիւնները չէին էլ կարող ստացվել։

ԿԼԷՐԿՍԴՕՐՊ։ Բօէրական երկու կառավարութիւնների անդամները խորհրդակցութիւն ունէին չորեքշաբթի եւ այսօր։ Խորհրդակցութեանը մասնակցում էին նրանք միայնակ։ Օտար մէկի հետ հաղորդակցութիւնը թոյլատրված չէ։

ԻՍԿՈՒՏՍԿ։ Մարտի 30-ին, առաւօտեան, երկրաշարժ էր զգացվում։ Երկրաշարժը ամենից շատ զգացվում էր Սնէժնոյ գիւղում, Բայկալի արեւելեան ափում, ուր խորտակված են ծրխնելոյզները։ Դժբաղդութիւնների մասին չէ լսվում։

ԼՕՆԴՕՆ։ Պետական քարտուղարի օգնական Վիկօնտ Կրէնբօրն հաղորդում է համայնքների ժողովին, որ, Պէկինի անգլիական դեսպանի զեկուցման համեմատ, Մանջուրիայի վերաբերեալ պայմանագրութիւնը ստորագրված է։ Նրա որոշումները դեռ եւս պաշտօնապէս չեն հաղորդված կառավարութեանը, բայց, Կրէնբօրնի խօսքով, լսվում է, որ ռուսաց զօրքերը յետ կը կանչվեն Մանջուրիայից մասամբ վեց, իսկ վերջնականապէս—տասն եւ ութ ամսվայ ընթացքում՝ պայմանագրութիւնը ստորագրելու օրից։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մարտի 29-ին Մարիինսկի թատրոնում կայացաւ կոնցերտ ի նպաստ ինվալիդների։ Ներկայ էին Նոցա Մեծութիւնները։

31 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Правительственный Вѣстникъ» լրագրում տպված է ֆինանսների մինիստրի շրջաբերականը ակցիզային հարկահաւաքների կառավարիչներին, որով թոյլ է տրվում բաց թողնել ներքին շուկան, առանց լրացուցիչ հարկ վճարելու 1 միլիոն պուդ շաքար անձեռնմխելի պաշարից եւ 1 միլիոն պուդ ազատ պաշարից։

ԼՕՆԴՕՆ։ Մինիստրների խորհրդի այսօրվայ նիստը, որին մասնակցում էին Զէմբերլէն եւ Գիկս-Բիչ, երկար չը շարունակվեց։ Խորհրդակցութեան նպատակը եւ հետեւանքները անյայտ էին։

ԲՐԻՍԷԼ։ Կիսապաշտօնական յայտարարութեան մէջ ասված է, որ կառավարութիւնը վճռել է չը զիջել յեղափոխական շարժմանը։ Պարլամէնտը պարտաւոր է ազատ կերպով վճռել սահմանադրութեան վերաքննութեան եւ ձայնի ընդհանուր իրաւունքի վերաբերեալ հարցը։

ՇԱՆԳՀԱՅ։ Անմիջական վտանգը Նինպօում անցաւ։ Տեղական բնակիչների թշնամական տրամադրութիւնը դէպի օտարահպատակները թուլանում է. այդ պատճառով «Գէյէր» եւ «Վիւկա» զինուորական նաւերը յետ են կանչված։

ԷԴԻՆԲՈՒՐԳ։ «Iwning New»-ի խօսքով, Հոլանդիայում գտնվող բօէրների ներկայացուցիչները հանդէս եկան խաղաղութեան պայմաններով, որոնք, երեւի, հիմք կը ծառայեն բանակցութիւնների համար։ Այդ պայմաններով, բօէրները անպայման ազատութիւնը չեն հանդէս բերի որպէս իրանց պահանջների գլխաւոր կէտ, եթէ կաջողվի բօէրական երկու պետութիւնների ապագայ ներքին վարչութեան հարցի բաւարար լուծումն։ Մնացած պայմաններից ուշադրութեան արժանի է Կիտչենէրի այն շրջաբերականի վերացման պահանջը, որ վերաբերում է բօէրական գոյքերի յարքունիս գրաւման եւ Կապի ապստամբներին ներումն չնորհելուն։

ՊԻԷՏՕՐԻԱ։ Արտակարգ գնացքով Կլէրկսդորպից եկան այստեղ Շալկ-Բուրգէր, Լուկա Մէյէր, Դելարէյ, Շտէյն եւ Դէվէտ։

ԼՕՆԴՕՆ։ «Ռէյտերի գործակալութիւնը» իմացել է, որ խաղաղութեան դաշն չուտով կապելու բոլոր լուրերը վաղաժամ են։ Անհաւանական է, որ Կլէրկսդորպում խորհրդակցող բօէրական պարագլուխները միանգամից առաջարկէին այնպիսի պայմաններ, որոնք կարողանային ընդունվել բրիտանական զօրքերի հրամանատարի կողմից։

ՀՕՆԿՕՆԳ։ Պինչաու, Խէնդաու, Կինիէնֆու քաղաքները Կուանգսիում եւ Պինպիէն քաղաքը Կվիչաու նահանգում ընկան ապստամբների ձեռքը։ Այդ քաղաքների մանդարինները գերի են բռնված։

ՈՒՏՐԷԽՏ։ Լէյդս յայտնեց «Ռէյտերի գործակալութեան» ներկայացուցչին, որ Լօնդոնում տարածված այն տեղեկութիւնը, որ իբր թէ որոշված են խաղաղութեան պայմանները—ճիշդ չէ։ Խաղաղութիւնը չի կապվի, մինչեւ որ գործի հանգամանքը չը հաղորդվի բօէրական ներկայացուցիչներին Եւրոպայում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Приднѣпровскій Край» լրագիրը դադարեցրված է ութ ամսով։

31 մարտի

ՎԱՐՇԱՎԱ։ Վարշավայում կազմվում է աւստրօ-ունգարական արդիւնաբերական ցուցահանդէս։ Լրագիրների խօսքով, անգլիական դրամատէրերը պատրաստվում են մի ընդարձակ սպանդանոց չինել այստեղ՝ միս արտահանելու համար։

ԽԱՐԿՕՎ։ Բժշկական ընկերութիւնը պրոֆէսօր Լէյդէնին ընտրեց իր պատուաւոր անդամ։

ԿՕՎՆԱ։ Նովո-Ալէքսանդրովսկի գաւառից հաղորդում են այն յանցանքի մասին, որին զոհ դարձաւ հրէական մի ընտանիք՝ եօթ հոգուց բաղկացած, որոնք կենդանի այրվեցին։ Ցան-

ցանքի նպատակը կողոպտումն էր։ Ոստիկանութիւնը գտաւ յանցաւորների հետքը։

ՈՒՏՐԷԽՏ։ Լէյդս հնարովի է յայտարարում այն տեղեկութիւնը, որ իբր թէ բօէրական պատուիրակները ձեւակերպել են խաղաղութեան պայմանները Հոլլանդիայում։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ։ Մեծ Իշխան Նիկոլայ Միխայլովիչ ճանապարհ ընկաւ արտասահման։

1 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մարտի 31-ին Վարշավայի երկաթուղու գնացքով ճանապարհ ընկան արտասահման գնդապետ Մարչան եւ կապիտան Սօվաժ։

ԿԵԱԽՏԱ։ Մարտի 31-ին զգացվում էր ալիքանման, հարաւ-արեւմուտքից դէպի հիւսիս-արեւելք, երկրաշարժ։ Թոյլ երկրաշարժներ պատահում են այստեղ համարեա ամեն տարի։

ՕԴԷՍՍԱ։ Ապրիլի 18-ից մոցնվում է ուղղակի, առանց տեղափոխութեան հաղորդակցութիւն Օդէսայի եւ Վարշավայի միջեւ։ Գընացքներում կը լինեն վագոն-ռէստորաններ։

ԽԱԲԱՐՕՎՍԿ։ Մարտի 30-ին, առաւօտեան 8 ժամին, զգացվում էր երկրաշարժ։ Երկու հարուած եղաւ. բարձր տները տատանվում էին եւ պատերը շարժվում էին։

ՄՕՍԿՎԱ։ Մարտի 31-ին բացվեց համառուսական հրդեհաշիջային համաժողովը։ Առաւօտեան 9½ ժամին Մոսկվա ժամանեց համաժողովի Օգոստափառ նախագահ Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչ։ Դիմաւորելու համար կայարան ժամանեց Մոսկվայի գեներալ-նահանգապետը։ Ցերեկվայ 2 ժամին տեղի ունեցաւ համաժողովի առաջին նիստը կօնսերվատորիայի մեծ դահլիճում, ներկայութեամբ Մեծ Իշխաններ Վլադիմիր Ալէքսանդրովիչի եւ Սերգեյ Ալէքսանդրովիչի եւ Մեծ Իշխանուհի Ելիսաւետա Ֆէօդորովնայի։ Նիստը բացվեց նախագահի օգնական Իշխան Լվովի կարճ ճառով։ Ներքին գործերի մինիստրութեան ներկայացուցիչը յայտնեց, որ մինիստրը մեծ ուշադրութեամբ է վերաբերվում համաժողովի պարապմունքներին եւ պատրաստ է ամենայն աջակցութիւն ցոյց տալ նրա որոշումների իրագործման։ Կային էլի ողջոյններ ֆինանսների, երկրագործութեան եւ հաղորդակցութեան ճանապարհների մինիստրներից։ Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչ հաղորդեց, թէ Թագաւոր Կայսրը բարեհաճեց լիազորութիւն տալ Նորին Բարձրութեանը հաղորդել համաժողովին Նորին Մեծութեան ողջոյնը։ Թագաւորը հաւատում է համաժողովի պարապմունքների աջողութեանը։ Ներկայ եղողները լսեցին այդ յայտարարութիւնը ոտքի կանգնած եւ ընդունեցին ուրայի ոգեւորված գոչումներով։

ՍՕՖԻԱ։ «Բոլգարական գործակալութիւնը» մատնացոյց է անում, որ բոլգարական կառավարութիւնը ամեն միջոցներ ձեռք առաւ՝ խանգարելու համար զանազան արարքներին տրամադիր աւազակախմբեր կազմելը։ Կասկածաւոր անձինք ենթարկվում են հսկողութեան կամ անյապաղ կալանաւորման. օրինակ, երէկ բռնվեցին մակեդոնական կոմիտէի երկու գործակալներ՝ Սաեվ եւ Ստոեանօվ։ Ամբողջ աւազակախմբեր գտնելը վարչութեան համար աւելի էլ լաւ կը լինէր, քան թէ նոր անձանց երեւան հանելը, բայց սահմանագծային պահակախումբը դեռ եւս առիթ չէ ունեցել հալածելու այդպիսի աւազակախմբերին։ Դա ապացուցանում է, որ վերջինները ամենեւին չը կան։ Այն լուրերը, որ իբր թէ աւազակախմբերը շարունակում են անցնել սահմանը իշխանութիւնների աչքի առաջ,— տարածում են այն շրջանները, որոնք կամենում են անուանարկել Բոլգարիան Եւրոպայի հասարակական կարծիքի առջեւ եւ նրա վրա գցել հնարաւոր ապստամբութեան պատասխանատուութիւնը Մակեդոնիայում։

ԼՕՆԴՕՆ։ Երէկ, երեկոյեան 11 ժամին, Զէմբէրլէնի բնակարանում կայացաւ մինիստրների խորհրդակցութիւն։ Ներկայ էին Դէվոնշիրեան դուքսը, Զէմբէրլէն, Բրոդրիկ եւ Հիքս-Բիչ։ Ասում են, որ խորհրդակցութեան պատճառը Կիտչէնէրի նշանաւոր հաղորդագրութիւնն էր։

ՊՐԷՏԱՐԻԱ։ Բօէրական պարագլուխները գիշերով ճանապարհ ընկան Կլէրկսդօրպից երկու արտակարգ գնացքներով եւ կտնդ առան միայն Պօչէֆստրօմում, ուր կայարանում տեղի ունեցաւ ճաշ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտարարում է, թէ Բօրժօմում, Վօրոնցօվեան փողոցի վրա, հանքային ջրերի պարտէզի մօտ, առաջիկայ ամարային սեզօնի համար վարձով է տրվում Թիֆլիս քաղաքին պատկանող մի ամբանոց (նախկին Արիստոդոմօվի) կահ-կարասիներով եւ կարեւոր շինութիւններով։ Ամբանոցը սեզօնի սկզբում վերանորոգված կը լինի եւ կը տրվի ամբողջովին կամ առանձին յարկերով։ Նոյն այդ ամբանոցը ծախվում է։ Գնի մասին տեղեկանալու համար պէտք է դիմել Թիֆլիսի Քաղաքային Վարչութեան՝ բոլոր լի օրերը, ժամի 10-ից մինչեւ 3-ը։ 2—3

Զգուշացէք կեղծուածներից

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ԲՕՐՆՕ-ՏԻՄՕԼԵԱՆ ՍԱՊՈՆ
Գ. Ֆ. ԻԻՐԳԷՆՍ

Ոչնչացնում է պեպէնները, սեւութիւնը, դեղին բծերը, պուզիկները եւ պտուկները եւ ներգործում է աւելորդ քրտնելու դէմ։ Խորհուրդ է տրվում ձեռք բերել, որպէս տուալէտային անուշահոտ սապօն, բարձր արժանաւորութեան։

ՈՍԿԷ ՄԵԴԱԼ 1893 թ-ի համար։

Կտորի գինը 50 կ., ½ կտորի 30 կ.։

Ծախվում է բոլոր ամենալաւ գեղագործական մագազիններում եւ դեղատներում։

Գլխաւոր պահեստը ամբողջ Ռուսաստանի համար Գ. Ֆ. Իւրգէնսի մօտ Մոսկվայում։ Դէպօ, Թիֆլիսում, Ազմուրովի մօտ, գեղագործական ապրանքների առեւտրի կովկասեան ընկերութեան մէջ, Մուրինօվի եւ Գրիվնակի, պ.պ. Գոլոմշների եւ Արիստակովի մօտ։ (1, 15) 9—24

ԵՐԿՐԱՉԱՓ ԻՆԺԵՆԷՐ
Ս. ԲԱՀԱԹՐԵԱՆ

Ընդունում է երկրաչափական եւ հարթաչափական (нивеллировочныя) եւ այլ տեսակ գէոդէզիական աշխատութիւններ՝ ջուր մատակարարելու, կանալիզացիայի, ոռոգման, ճահիճներ ցամաքացնելու, ատառների բարեկարգութեան, լեռնային գործի, ճանապարհների եւ փողոցների շինութեան եւ կանոնաւորութեան, քաղաքային եւ այլ անշարժ կալուածքների կարգաւորութեան, յատակագծի վրա գնահատական (оцѣночный сборъ) տուրքի համար, քաղաքային եւ այլ հողերի որոշումը, քաղաքային յատակագծի հաստատելը օրէնսդրական կարգով եւ այլն։

ԲԱԳՈՒ, «Դվօրցօվայա Նօմէրներ» հիւրանոց. կամ Թիֆլիս՝ Ավճալեան փողոց, Շահբուդաղեանի տուն, № 59, բակում։ 91—100

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլտուութեամբ։ Մեծ արկղիկը 5 ռուբլի, փոքրը—3 ռ. եւ 1 ռ. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ

մաղերը բուսցնելու եւ ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաեւ բոլորովին նոր միջոց

ԶՈՒԻ ԿԱԹԸ

երեսին քնքշութիւն եւ սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մունները, տալիս է կաշուին քնքշութիւն եւ սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 ռուբլի, փոքրը—1 ռ. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական եւ դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինսկայա փողոց, տ. № 15, բնակարան № 2. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում՝ Կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երեւանեան հրապարակ եւ նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց եւ Բաքուում. նաեւ Միքայէլեան կամուրջի վրա, Գոլովի եւ Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս պօստով։ 69—100

ԼՕՑՍ ՏԵՍԱԻ
ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ

№ 3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. ՉՀՈՒՊ-ՔՈՒՇԱՆ, վէպ Շահրիարի. 2. ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ, վէպ Հաճրի Բօրդօի, թարգ. Հ. Առաքելեանի. 3. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ Աւ. Իսահակեանցի. 4. ՎԵՐՋԻՆ ՀԱՄԲՈՅՐ, պատմուածք Լ. Բաշալեանցի. 5. ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ, Ե. Ֆրանգեանցի. 6. ՀԷՆԵՐԻԿ ԻԲՍԷՆ, յօդ. Վ. Նալբանդեանցի. 7. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ Նիկիտինից, թարգմ. Ալ. Պաղտուրեանցի. 8. ԿԱԽԱՂԱՆԷՆ... ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ, պատմուածք Առանձարի. 9. ԳՈՒԹԱՆԻ ՇՈՒՆՉԸ, պատմուածք Ա. Աթանասեանցի. 10. ՍՊԻՏԱԿ ՉԳԵՍՏ, բանաստեղծ. Միխայլովի, թարգմ. Կ. Կրասիլնիկեանցի. 11. ԱՂՋԻԿ, առողջապահական և բարոյագիտական էտիւդ բժշ. Վ. Արծրունու. 12. ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.—9) «Էմինեան ազգագր. ժողովածու, Լ. Ս.—10) „D-r Gogidschanschwili. „Das Gewerbe in Georgien“ Ռ. Ի.—11) Ս. Վէբէր, «Արարատը Ս. Գրոց մէջ», Սե. Մ.—12) Տիրոջոսեան՝ Նկատողութիւն Փաստոսի պատմութեան վերաբերեալ, Սե. Մ.—13) Կ. Փաշայեան, «Մարդկութեան ամենամեծ թշնամին», Վ. Ն. Նոր ստացված գրքեր.

13. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Միջնակարգ դպրոցների ռեֆորմներից. փոխադրական քննութիւնների վերացումը և ուսուցիչների վարձատրութեան հարցը.—Հասարակութեան և դպրոցի մէջ եղած կապը.—Ինչպէս վճռեց ֆինանսների մինիստրութիւնը այդ հարցը.—Ռեմորականդպրոցների կազմակերպութեան խեղճ հիմքը.—Հողարարձական խորհուրդը.—Մեր „ազգային մանկավարժվարիչների“ մի տարօրինակ ընդունակութիւնը.—Ի՞նչ ճանապարհով պէտք էր փոփոխութիւններ մտցնել մեր թեմ. դպրոցներում գոյութիւն ունեցող կանոնագրութիւնների մէջ.—Իրաւունք և քմահաճոյք.—Իրական կարգերի առաւելութիւնը.—Կառավարչական սենատի մի որոշումը։ Լ. Սարգսեանցի. Պաշտօնական հաղորդագրութիւններ. Պարսկական գիւղի աղանդաւորների գործը.—Յոյներ Ֆինլանդիայում.— Кавказъ“-ի հաղորդածը.—Կիևի պոլիտեխնիկական փակումը.—Ուսանողական անկարգութիւններ Սոսկուայում.—Թիւրքահայ փախստականների մասին կարգադրութիւն։ 14. † ԱԼ. ԵՐԻՑԵԱՆ. 15. ԳԱՒԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ. Մտաւոր առաջադիմութեան գործը մեր դաստաններում.—Համակրելի երևոյթներ.—Ժողովրդի անօգնականութիւնը.—Ընթերցասիրութեան պակասը հանջ.—Ի՞նչպէս լրացնել այդ պահանջը.—Ինքնօգնութիւն.—Վերադարձ դէպի դաստանները.—Հողաբարձական ընտրութիւններ Երեւանում.—Ինքնավարութիւնը՝ անտանելի բեռ Շուշի քաղաքի համար.—Նշանաւոր տուն Բաքուում։ Ա.

16 ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Սիոնիստների 5-րդ համաժողովը. — Անգլօ-բօէրական հաշտութեան հարցը.—„Իտալական իրրիդենտիզմ“ Տրիեստում.—Ցուրի համաժողովի որոշումները։ Լ. Ս.Սանաս. վարժարան. 17. ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹԻՒՆԸ Մ. Ցովհաննիսեանցի. 18. ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ, Վ. Ա. 18. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ. 19. ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. 20. ՖԵԼԻՈՆԸ. «ՕՐԱՄՈՒՏԻՆ», վէպ Ի. Ս. Տուրգենեվի։

Թիֆլիսի Նաւթարդիւնաբերական Ընկերութեան Վարչութիւնը

սրանով յայտարարում է ի գիտութիւն պ. պ. բաժնետէրերի, որ տարեկան ընդհանուր ժողովը տեղի կունենայ ներկայ 1902 թ-ի ապրիլի 28-ին, կիրակի օրը, առաւօտեան ժամը 10-ին, քաղաքային խորհրդարանի դահլիճում։

Զբաղմունքի առարկաների մասին կը յայտարարվի առանձին։ 1—1

Ֆրանսիական Շոգենաւային Ընկերութիւն
«ՄԵՍՍԱԺԷՐԻ ՄԱՐԻՏԻՄ»—«MESSAGERIES MARITIMES».

8/21-ին ապրիլի մեկնելու է Բաթումից, ցերեկվայ ժամը 11-ին, «Tigre» շոգենաւը, հանդիպելով՝ Նովորոսսիյսկ, Կ. Պոլիս, Դարդանէլ, Զմիւռնիա, Պիրէ, Մարսէյլ, Հավր եւ Լօնդօն։

Ուղղակի հաղորդակցութեան տոմսակները մինչեւ Պարիզ, նոյնպէս եւ մինչեւ Շանղհայ (Չինաստանում), Վլադիվոստոկ գնացողների համար, կարելի է ստանալ Թիֆլիսում պակասագրած գներով։

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին՝ հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել Ընկերութեան Թիֆլիսի գործակալ պ. Վ. Յակոբեանին, նախկին Արծրունու գալէրէյում, № 127 գրասենեակը. հեռախօս № 608։ Գրասենեակը բաց է 9—1 ժամը ցերեկվայ եւ 5—7-ը երեկոյեան, բացի կիրակի օրերից։ 1—1

Թիֆլիսի Կենտրոնական գրավաճառանոցում
վաճառվում են՝

ՓԱՆԵԱՆՑ ԽԱՉ. ՔԱՀ., Բարեպաշտները (արեւելեան զրոյց), Թիֆլ. 1901 թ. գ. 10 կ.
» Թարգմ., Ցուդայի վերջին գիշերը, Թիֆլ. 1901 թ. գ. 5 կ.
» Փարիսյա, Թիֆլ. 1901 թ. գ. 15 կ.

ВЕСЕЛОВСКІЙ ЮРІЙ, Армянскій поэтъ Смбатъ Шахъ-Азизъ, критическій этюдъ Москва, 1902 г., ц. 1 р.

ՑԱՐՈՑ Ն., Նկարներ (ծաղկաքաղ իմ նամակներից), գ. 50 կ.
ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ ԳԷՈՐԳ, Բանաստեղծութիւններ, գ. 1 ռ.
ՐԱՖՖԻ, Վէպիկներ եւ պատկերներ 2 հատոր—4 ռ., Կայծեր ա. հատ.—2 ռ., Զահրումար—2 ռ., Տաճկահայք—50 կ., Մինն այսպէս—միւսն այնպէս—պատկերազարդ—1 ռ. եւ Կայէնի կոտակը—1 ռ. 20 կ.։

Դիմել՝ Въ Тифлисъ, въ Центральную Книжную торговлю. (Ь) 5—5

ՍՏԱՑԵԼ ԵՆՔ
ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ

ԳԱՐՆԱՆԱՑԻՆ ԵՒ ԱՄԱՌԱՑԻՆ ՍԵԶՕՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

տղամարդկանց, կանանց եւ երեխաների

ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ

Ընդունում ենք, մեր կատորներից, ամենայն տեսակ ՊԱՏՈՒԷՐՆԵՐ (ЗАКАЗЫ), որոնք ըստացված են արտասահմանեան և ռուսական ամենայայտնի գործարաններից։

Մագազինին կից բացել ենք նոր բաժանմունք, բացառապէս կանանց վերնազգեստների համար, կարված ամենավերջին տարազով։

ԳՆԵՐԸ ԱՄԵՆՔԻՆ ՄԱՏՉԵԼԻ ԵՆ

Դիմել՝ եղբ. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆՆԵՐԻՆ

Գոլովինսկի պրոսպէկտ, տուն Քաշվէթեան ս. Գէորգ եկեղեցու, առաջին գիմնազիայի հանդէպ։ 12—20

Дозволено Цензурою, Тифлисъ, 1 Апрѣля 1902 г.

Электропечатня Груз. Издат. Т—ва. Б.-Ванкская ул.